ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՏԵՂԱԿԱԼԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1911 թ. մարտ 31, № 1434. առաջադրուեց Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի նախագահող գեր. Տ. Եփրեմ եպիսկոպոսին՝ նորա միջնորդութեան և Տփխիսի Վանաց աւագ եկեղեցու միաբան քահանաների և երեսփոխի խնդրի համաձայն, ձեռնադրել նոյն եկեղեցու սպասաւոր Լիս գիւղի շտաւնի գալիր Նիկողայոս Բաւէեանին սարկաւագ և թոյլ տալ նորան ժամանակաւորապէս շարունակել սպասաւորութիւնը Վանաց աւագ եկեղեցում։

—Մարտ 31, № 1435. թոյլ տրուեց Տփխիս քաղաքի Յովհաննէս աւագ քահանայ Մարտիրոսեանի՝ «Քրիստոնէական Հաւատ, Յոյս և Սէր» վերնագրով աշխատութեան տպագրութիւնը։

—Ապրիլ 15, № 1458. առաջադրուեց Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի նախագահող գեր. Տ. Եփրեմ եպիսկոպոսին անձամբ գնալ Գորի քաղաքը քննելու տեղական հայ ժողովրդի և քահանաների մէջ ծագած գժտութիւնները և լրացնել օրինաստեղծման կարգով Հայոց Հոգևոր Կառավարութեան կազմը, որպէս զի Գորու վիճակի վրախօս հայերը դուրկ և անմխիթար չմնան իրենց հոգևոր պէտքերի կատարումից։

—Ապրիլ 18, № 1464. առաջադրուեց Մայր Աթոռի Վանական Կառավարութեան ամեն տեսակ անհրաժեշտ յարմարութիւններ տալ նոր Նախիջևանի թեմական դպրոցական ճանապարհորդութիւն կատարելու նպատակով կը ժամանեն ս. Էջմիածին։

—Ապրիլ 18, № 1465. շնորհուեց գոհունակութեան և օրհնութեան գիր Արմաւիրցի պ. պ. Ազէքսանդր և Միքայէլ Թորոսեանց եղբայրներին անունով 40,000 ռուբլի նուիրաբերութեան առթիւ՝ Մայր Աթոռի Գէորգեան Հոգևոր Ճեմարանի բակում կառուցանելու ֆիզիքական, քիմիական և բնական գիտութիւնների, նկարչական կաբինետի, մարմնամարզարանի, դրադարանի և ընթերցարանի պէտքերի համար սենեակներ։

—Ապրիլ 21, № 1472. առաջադրուեց ս. Էջմիածնի Սինոդին տալ ուսանող Յովհաննէս Կարապետեանին և Սենեքերիմ Տէր Յակոբեանին 400-ական ռուբլի հանգուցեալ Աւետիս Ղուկասեանցի կտակի դրամագլխի տոկոսներից՝ շարունակելու ուսումը։

—Ապրիլ 21, № 1475. առաջադրութիւն Գէորգեան Հոգևոր Ճեմարանի վարչութեան անունով, որով թոյլ տրուեց կառուցանել, մանկավարժական ժողովի որոշման համաձայն, մանկավարժական թանգարանի շէնքը Ճեմարանի ննջարանի և հիւանդանոցի արևելեան կողմում։

—Ապրիլ 21, № 1476. առաջադրուեց Ղարաբաղի Վիճակային Կոնսիստորիային տալ նոյն վիճակի նախկին թեմական տեսուչ պ. Ստեփան Տէր Աւետիքեանի ապառիկ մնացած 450 ռուբլի ոճիկը՝ 178 ռուբլի պահինների մնացած պատրաստի յիսնական կոպէկներից և 272 ռուբլին վիճակային արդիւնքից, որ յետոյ պէտք է լրացնել պահի յիսնական կոպէկագրամներից։

—Ապրիլ 21, № 1477. գրութիւն երդուեալ հաւատարմատար պ. Սամսոն Յարութիւնեանի անունով, որի հետ ուղարկուեց Կ. Պոլսի Հայոց պատրիարքական տեղապահի № 819 հաւատարմագիրն և յանձնարարուեց պաշտպանել հանգուցեալ Աւետիս Ղուկասեանցի կտակի գործը նորա վէճ յարուցանող ազգականի դէմ։

—Ապրիլ 21, № 1478. առաջադրութիւն Ս. Զաւէն վարդապետի անունով, որով յայտնուեց՝ ի պատասխան

նորա հրաժարական խնդրել, որ չէ ընդունուած հրաժարականը Ղարաբաղի Կոնսիստորիայի նախագահութեան պաշտօնից և պատուիրուեց շուտով մեկնել իւր նոր պաշտօնավայրը։

—Ապրիլ 21, № 1479. առաջադրութիւն Կարսի Հաւատարիմ քահանայ Ղարագեօզեանի անունով, որի հետ ուղարկուեց Կ. Պոլսի Հայոց պատրիարքական տեղապահից առացուած նոր հաւատարմագիր հանգուցեալ բժիշկ Սղէքսանդր Տէր Յարութիւնեանի կտակի գործի պաշտպանութեան համար պատշաճ դատարանում։

—Ապրիլ 23, № 1481. առաջադրուեց ս. Էջմիածնի Սինոդին տալ Տ. Տիրայր վարդապետին ճանապարհածախս Փիշնև գնալու՝ նոր նախիջևանի և Բեսարաբիայի Հայոց Կոնսիստորիայի անդամութեան պաշտօնով և կարճել Մայր Աթոռում մայիսի մէկից նորա ռոճիկն ու մենդաքրամը։

—Ապրիլ 23, № 1482. առաջադրութիւն Երևանի Հայոց դեր. փոխ թեմակալի անունով, որով տեղեկութիւն տրուեց հանգուցեալ Բառնաբաս վարդապետի թողած 2800 ռուբլու երկու տոմսի ստացման և ս. Էջմիածնի Սինոդին յանձնելու մասին, որ նեղիայացրել էր յիշեալ փոխ թեմակալը։

—Ապրիլ 23, № 1483. դրութիւն Կ. Պոլսի Հայոց պատրիարքական տեղապահի անունով, որի հետ վերադարձուեց Օսմանեան պետութեան կայսերական հրովարտակը, որ տուած էր Տ. Մեսրոպ վարդապետին (այժմ եպիսկոպոս) նորան շնորհած Մէճիտիէի Գ-րդ կարգի շքանշանի համար, որը արդէն վաղուց ունէր նա։

—Ապրիլ 23, № 1485. շնորհաւորութեան և օրհնութեան գիր պ. Շիրվանզադէի անունով նորա գրական գործունէութեան երևանամեայ յոբելեանի կատարման առթիւ։

—Ապրիլ 24, № 1488. օրհնութեան և մխիթարական գիր մեծ քարերայ հանգուցեալ Սղէքսանդր Յովհաննիսեանի

Մանթաշեանի որդիների անունով՝ նոցա հօր մահուան առթիւ։

—Ապրիլ 26, № 1492. առաջադրուեց գեր. Տ. Յուսիկ արքեպիսկոպոսին գնալ Տփխիս և ներկայ լինել Տ. Տեղակալի և Մայր Աթոռի միաբանութեան կողմից մեծագործ հանգուցեալ Ալէքսանդր Մանթաշեանի թաղման։

—Ապրիլ 23, № 1493. առաջադրութիւն Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի նախագահող գեր. Տ. Եփրեմ եպիսկոպոսի անունով, որով յիշեալ կարգադրութեան մասին տեղեկութիւն ստուեց նորան։

—Ապրիլ 28, № 1500. առաջադրութիւն Ղարաբաղի վիճակային Կոնսիստորիայի անունով. որով նոյն Կոնսիստորիայի անդամ կարգուեց Յակոբ քահանայ Այվազեանցն ս. Էջմիածնի Սինոդի օրագրական վճռով արձակուած Սամուէլ քահանայ Գասպարեանի փոխարէն։

—Ապրիլ 28, № 1501. առաջադրուեց Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի նախագահող գեր. Տ. Եփրեմ եպիսկոպոսին խիստ ուշադրութիւն դարձնել և հսկել, որ ոչ ոք առանց ժամաշապկի չըպատարագէ և չերգէ Տփխիսի Հայոց եկեղեցիներում։

—Ապրիլ 29, № 1510. առաջադրուեց ս. Էջմիածնի Սինոդին տալ Տ. Եղիշէ վարդապետ Ահարոնեանին, նորա խնդրած նպաստի փոխարէն, ամսական 50 ռուբլի ռոճիկ և անդադրում ի մէկէն մայիսի մինչև տարեսոյս օգոստոսի վերջը, որպէս զի իւր խնդրի համաձայն գնայ ապաքինուելու։

ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳԻՐՆԵՐԻՑ

Ապրիլի 1-ին թ. 249. Սինոդը լսեց Ամենապատիւ Տ. Տեղակալի անցեալ մարտի 28-ի թ. 1427 առաջադրութիւնը Սիօն վարդապետին Մ. Աթոռի հիւրընկալ նշանակելու մասին, որոշեց. Ամենապատիւ Տ. Տեղակալի առաջադրութեան համաձայն Տ. Արիստակէս վարդապետին